


76.2

11063



891.99

Ծ.53

981

# Կ Թ Ի Ք Թ Ա Ք

ԾԻԾԱՂԱՇԱՐԺ ԶԱՒԵՑՏ

ԵՐԿՈՒ ԱՐԱՐՈՒԱԾ



Բ ի ե ս ի զ ե ր ա ծ ե ց

Լ Ե Ւ Ո Ն Մ Ի Ե Ա Ն

Հ ր ա ս ա ր ա կ ի չ

ՅԱԿՈԲ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Տպագր. «ԹԷՍԼԻԱԹ»

Ա. Պոլիս

1929



# ԹԻՖ ԹԱՓ

ԾԻԾԱՂԱՇԱՐԺ ԶԱՒԵՑ

ԵՐԿՈՒ ԱՐԱՐՈՒԱԾ



Բիեսի վերածեց

ԼԵՒՈՆ ԾԻԾԱՂ

ՀՐԱՏՎԱԿԻՀ

ՅԱԿՈԲ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Տպագր. «ԹԵՍԴԻԼԱԹ»  
Կ. Պոլիս

1929

27477-4.3

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

<b>ԹՕՄԱՍ</b>	56	<b>տարեկան</b> ,	<b>ճաշաբանապետ</b>
<b>ԹԵՐԷԶԱ</b>	35	»	<b>թոմասի կինը</b>
<b>ԱՆԹՈՒԱՆ</b>	28	»	<b>Քառակահատ</b>
<b>ԺՈԶԵՖ</b>	32	»	»
<b>ԱԼՊԻՐ</b>	40	»	<b>ԲԺԵԿ</b>
<b>ՕՍՔԱՐ</b>	70	»	<b>ԽԵՆԴԵՐՈՒ ԲԺԵԿ</b>
<b>ԺԱՅ</b>			<b>ԲԵՆՆԱԿԻՐ</b>
<b>ՄԻՇԵԼ</b>			»

Ծանօթ. — Ներկայացման իրաւունքը վերապահաւածէ ամէնուն:



2003

6385-57

## ԱՐԱԶԻՆ ԱՐԱՐՈՒԱԾ

(Բնեմը կը Եերկայացնէ Թումասի ճաշարանը : Պարզ սենեակ մը : Զախ կողմը, պատէն կախուած խոռոր ժամացոյց մը : Աջ կողմը եւ մեջտեղը դրուած են սեղաններ, բլուրքիքը արոռներ : Սեղանները զարդարուած են ներմակ սփոռցներով. Վրան ջուրի սիւեր, գաւարներ եւ պինակներ :

S U B L I U.

ԹԱՐԱԾՈՒՅՈՒՆ (ԱՆՎԱԾՃԻԿ)

Ծիսակը բսելով ալ չքաշուելիք եղաւ այս կինը, ևս, որ այսքան համբերող եմ, կարծեմ չպիտի կրնամ դիմանալ և օր մըն ալ պիտի պոռթկամ, ինչ մաքրութիւն որ ընեմ չի հաւնիր, եփած կերակուրներուս անպատճառ բան մը պիտի ըսէ, եկու տես որ երբ ամուսնացանք, կերակուր եփելուն ձեւն անգամ չէր զիտեր: Եթէ զալու ըլլայ և շարունակէ իր ընթացքը, վերջնականապէս իրեն պիտի աղդարաբեմ որ, եթէ անգամ մըն ալ իմ գործերուս միշտամելու ըլլայ, օրհնած բերանս պիտի բանամ և մէյ մըն ալ չպիտի գոցեմ, եղքայր, եկող յաճախորդներն անգամ զժգոն են, անոնցմէ ալ չամչնալով կը սկսի բերնին եկածը դուրս տալ: (Կես բարկութեամբ եւ սեղանները մաքրելով): Ճաշարան բանեցնողը ուր, ես ուր, բայց լուսահաղի մեծ հայրս (Ժամացոյցը ցոյց տա-

լով) այս ժամացոյցը հօրս ժառանգ ձգելովը, և հօրմէս ալ ինծի ժառանգ մնալովը կրնամ կոր քիչ թէ շատ ապրուիլ այս գործով։ Գրեթէ եկող յաճախորդներուն ամէնքն ալ ժամացոյցին համար են, եկողը անպատճառ ժամացոյցը պիտի դիտէ և սքանչանայ։ Կինս մինչեւ անգամ այս ժամացոյցին, որ մեր ապրուստի միջոցն է, «գլխուդ փորձանք մը պիտի բերէ, սա ժամացոյցը ծախէ» կ'ըսէ, բայց ես իրեն պէս իենդ չեմ որ ձեռքէ հանեմ։ (Ներսէն ոսքի ձայն կը լսուի։) Ոտքի մը ձայն կայ, այս ժամուս յաճախորդ չի կրնար ըլլալ, անպատճառ կինս ըլլալու է։

## ՏԵՍԻԼ Բ.

## ԹՈՄԱՍ ԵՒ ԹԵՐԵԶԱ.

ԹԵՐԵԶԱ. — (Ներս մնելով եւ երեսին վրային փոքի փշելու պէս ընելով) Անմաքրութիւն, անմաքրութիւն և վերջին ծայր անմաքրութիւն։ Թօմա, այս ի՞նչ խայտառակութիւնն է։

ԹՈՄԱՍ. — Իրաւունք ունիս, սիրելի կնիկս, մինակ ըլլալուս ասկէ աւելի չեմ կրնար կոր ընել։

ԹԵՐԵԶԱ. — Կնիկս մնիկս չգիտեմ, ես ամէն բան իր տեղը և մաքուր կ'ուզեմ։

ԹՈՄԱՍ. — Եթէ այդքան մաքրասէր ես, խուչիկս, ինծի հետ գուն ալ աշխատէ, և այն ժամանակ ուզածիդ պէս մաքուր կ'ըլլայ։

ԹԵՐԵԶԱ. — Ի՞նչ, ի՞նչ ըսիր, ե՞ս ալ աշխատիմ, ես ալ քեզի հետ աշխատիմ, հապա ո՞ւր կը մնայ քու էրիկմարդութիւնդ։

ԹՈՄԱՍ. — Թէրէզա, չես տեսնար կոր պեխս և մօրուքս։

- ԹԵՐԵԶԱ. — Պէխս և մօրուք ունեցող կիներ չկա՞ն։  
 ԹՈՄԱՍ. — Բայց անպատճառ երիկ մարդ ըլլալու հաստատող բա՞ն մը պէտք է ցոյց տալ։ (Մեկուսի)։  
 Այս ի՞նչ փորձանք է։ Տէր Աստուած։  
 ԹԵՐԵԶԱ. — Զեմ գիտեր, ես միայն այն գիտեմ թէ, կիները իրենց տան գործերով կը զբաղին, իսկ այրերը դուրսի։  
 ԹՈՄԱՍ. — Եատ լաւ, ես ալ իրեւ այր մարդ դուրսը իմ գործովս կը զբաղիմ կոր, գուն ինչո՞ւ համար հոգ գալով իմ գործերուս կը միջամտես, չէ, չեմ ուզեր որ հոս գաս, հասկցա՞ր։  
 ԹԵՐԵԶԱ. — Հոս գալս չես ուզեր որ դուն քու ուղածիդ պէս գործես և խանութը աղաստութեան մէջ լողաց, անկէ ետք ալ բերանը օդին բռնէ ու սպասէ որ յաճախորդ գայ։  
 ԹՈՄԱՍ. — Բայց Թէրէզա, պէտք է լաւ գիտնաս որ հոս եկող յաճախորդները ոչ մաքրութեան համար կուզան և ոչ ալ կերակուր ուտելու։  
 ԹԵՐԵԶԱ. — Կը հասկնամ ի՞նչ ուզելու, դարձեալ սա ժամացոյցը կ'ակնարկես, այնպէս չէ։  
 ԹՈՄԱՍ. — Ոչ թէ կ'ակնարկեմ այլ ամէն ժամ կ'ազդոթեմ Աստուծոյ, որ այս ժամացոյցը անվտանգ պահէ և մեծ հօրս հոգին Աստուած լուսաւորէ որ իր որդույն և ան ալ ինծի ժառանգ թողար։  
 ԹԵՐԵԶԱ. — Թօմաս,, իմ հոգիս անանկ կը վկայէ թէ այդ ժամացոյցը օր մը չէ օր մը քու գիտուդ մեծ փորձանք մը պիտի բանայ։  
 ԹՈՄԱՍ. — Դուն քու հոգիիդ ձայնին կարեւորութիւն մի՛ տար, այս ժամացոյցին երեսէն է որ չորսուկէս տարուան մէջ 15 նարուէօն զուտ շահ մը ըրած եմ, 1500 ֆրանք, իմացա՞ր։  
 ԹԵՐԵԶԱ. — (Խնդալով) Հա՛, հա՛, հա՛, 15 նարուէօն 4ուկէս տարուան մէջ ի՞նչ մեծ հարստութիւն։

**ԹՕՄԱՍ.** — 15 նաբոլէօնին չի հաւանեցա՞ր, դռւն գըրապանդ 15 ֆրանք ունի՞ս և կամ հօրմէդ մօրմէդ 15 ֆրանք մնաց քեզի իբրեւ ժառանիք:

**ԹԵՐԵԶԱ.** — (Բարկութեամբ) Դուքն, դռւն հօրս մօրս անունը բերանդ առնելու արժանիք մարդ ես, շուտ բերնեղ դուրս հանէ:

**ԹՕՄԱՍ.** — (Բերնին մեջ վիճուելով, մեկուսի) Բայց բերնիս մէջ բան չկայ, (Կեկանը) թէրէզա. նախ սա ըսեմ որ ես քու հօրդ մօրդ անունը բերանս առած չեմ և երկրորդ բերնիս մէջը բան մը չկայ որ դուրս հանեմ:

**ԹԵՐԵԶԱ.** — Ալ հասկցայ որ ես քեզի հետ չպիտի կրնամ ապրիլ, հիմա պիտի երթամ մեծ եղաքօրս, ամէն բան պիտի պատմեմ, թող ան ձար մը մտածէ քենէ ազատելու համար: (Կը մեկնի)

Տ Ե Ս Ի Լ Գ.

### Թ Ո Մ Ա Ս առանձին

թէրէզա, թէրէզա, եկուր, քու ըսածիդ պէս կ'ընեմ, հայրդ մայրդ բերնէս կը հանե՞՞: կ'ուզե՞ս որ մեծ եղայրը զալով գլխուս մեծ փորձանք մը բերէ, սրիկային մէկն է: (Ներս կը մտնեն Անբուան եւ ծօգէֆ):

Տ Ե Ս Ի Լ Գ.

### ԹՕՄԱՍ, ԱՆԹՈՒԱՆ ԵՒ ԺՕԶէՖ

**ԱՆԹՈՒԱՆ.** — (Փօգէֆին) Հոգ մի ըներ, եթէ իմ պատմէրներս կէտ առ կէտ գործադրես, մենք հոս փառաւոր ձաշ մը ընելնէս վերջը կլորիկ դումար մըն ալ առնելով դուրս կ'ելլանիք:

**ԺՕԶէՖ.** — Ես այդ խօսքերուդ վրայ ամենեւին վըստահութիւն չունիմ, եթէ խայտառակութեամբ չմեկնինք շատ բան:

**ԹՕՄԱՍ.** — Հրամանեցէք պարուներ, հրամանեցէք, (Երկու խակահատները աջ կողմի սեղանը կը նսին):

**ԱՆԹՈՒԱՆ.** — (Թումասին) Թումաս, բաւական ատեն է որ քու խանութղ չեմ եկած, ինչ ունիս ուտելիք:

**ԹՕՄԱՍ.** — (Ցուցակը Երկնցնելով) Հրամանեցէք պարոն, ամէն բան և շատ համեղ:

**ԱՆԹՈՒԱՆ.** — Բեր, բեր, հաւու ջուրի ապուր բեր:

**ԹՕՄԱՍ.** — Հրամանենիդ գլխուս վրայ, մէ՞կ թէ երկու:

**ԱՆԹՈՒԱՆ.** — Հարկու երկու, առանձին չեմ որ:

**ԹՕՄԱՍ.** — Այս վայրկեանիս: (Դուրս կ'ելլայ):

**ԺՕԶէՖ.** — Անթուան, շատ բարձրէն մի նետեր, հաւու ջուրի ապուրը ինչ պիտի ըլլայ, անով մարդուն փորը կը կշուանա՞յ:

**ԹՕՄԱՍ.** — (Ապուրերը բերելով) Գրեթէ այս քաղաքին մէջ այս տեսակ համեղ և մաքուր ապուր եփող չկայ:

**ԱՆԹՈՒԱՆ.** — Արդէն ոյգաէս ըլլալը գիտնալովիս երեք մզոն տեղ քակելով հոս եկանք ձաշելու:

**ԹՕՄԱՍ.** — (Դէպի դուռը) Ա՛խ, հոս ըլլալիր տէ իմասնայիր:

**ԱՆԹՈՒԱՆ.** — Հաւու միս:

**ԹՕՄԱՍ.** — Տապկա՞ծ:

**ԱՆԹՈՒԱՆ.** — Այս', տապկուած:

**ԹՕՄԱՍ.** — Հիմա հիմա: (Մեկուսի) Ասոնք բաւական հարուստի կը նմանին կոր, կարծեմ լաւ գործ մը պիտի ընեմ ասոնց հետ:

**ԱՆԹՈՒԱՆ.** — (Փօգէֆին) Եթէ կերակուրները բերելու ըլլայ, ամենաբնտիր տեսակէն զինի ուզէ, առանց վախի:

**Ժ0ԶԵՖ.** — Այդ բանը իմ կարողութենէս վեր է, չի  
բաւել առանց գրամի փարենիս կշոացնելը, մէս  
մըն ալ գինի՝ պիտի խմենք:

**ԱՆԹՈՒԱՆ.** Ապուշութիւն պէտք չէ, ես քեզի ինչ  
որ կ'ըսեմ ան ըրէ:

**Ժ0ԶԵՖ.** — Շատ լու:  
**Թ0ՄԱՍ.** — (Երկու պնակ հաւ բերելով) Ահա պարսն-  
րոններ, այս հաւերը ճիշտ եօթը ամիս իմ հաւ-  
նոցիս մէջը պահելէս վերջ, այսօր մորթեցի:

**Ժ0ԶԵՖ.** — Այդ ամենքը լու, բայց ասոնք առանց  
գինիի խմել կարելի չէ:

**Թ0ՄԱՍ.** — Գինի՝ կ'ուղէք, շատ լու, բերեմ:

**Ժ0ԶԵՖ.** — Ինձի նայէ, զինիին լու տեսակը ունի՞ս

**Թ0ՄԱՍ.** — 0՞ն, խնդրեմ, զիս կը ծաղրէ՞ք թէ  
անոնս գնա չէք իմացած, իմ ունեցած զինիս  
ամենաբնտիրն է: (Գինի կը բերէ):

**ԱՆԹՈՒԱՆ.** — (Գինին խմելով) Այս', շատ լու զինի  
է, միայն թէ կերակուրները լմնցան, մսեղէն  
ի՞նչ կերպակուր որ ունիս բեր:

**Թ0ՄԱՍ.** — Շատ լու, (Ներս կ'երբայ)

**ԱՆԹՈՒԱՆ.** — Հիմա քեզի ինչպէս պատմնցի, այնպէս  
ալ պէտք է ի գործ գնես պատու էրներս:

**Թ0ՄԱՍ.** — Հրամացէք ձեզի մսեղէն:

**ԱՆԹՈՒԱՆ.** — Անուշէղէն չունի՞ս:

**Թ0ՄԱՍ.** — Չունի՞մ, այդ բառը իմ խանութիս մէջ  
գոյութիւն չունի, գուք միայն ուղեցէք:

**ԱՆԹՈՒԱՆ.** — Շատ լու, անուշեղէն բեր, բայց եր-  
կերկու բորբոխն ըլլայ:

**Թ0ՄԱՍ.** — Ամենայն սիրով: (Ներս կ'երբայ):

**Ժ0ԶԵՖ.** — Մարդը քու ըստիդ չափ ապուշ կ'երեւայ  
կոր, բայց ամբերութիւնն ալ կարծեմ շատ է,  
և ատով մենք գրաւը պիտի կորսնցնենք:  
Եթէ կէս ժամ ընդունի քու առաջարկդ և  
յաղթէ այն ժամանակ ի՞նչ պիտի ընենք:

**ԱՆԹՈՒԱՆ.** — 0՝, կ'երեւի Անթուանը չես ձանչնար:  
Շատ լու, եթէ ժամացոյցին առաջքը կենա-  
լով իմ ըսածներս ընէ, մենք զունէն զուրս  
պիտի ըլլենք բարձրաձայն խնդալով, եթէ  
ետին զառնայ, գրաւը կորսնցուցած պիտի  
ըլլայ, իսկ եթէ չդառնայ, մենք արգէն մեր  
նպատակին հասած և Տանկարին գարեջրա-  
տունը պիտի գտնենք ինգրինքնիս:

**Ժ0ԶԵՖ.** — Այս', այս', շատ խելացի կերպով է որ կը  
խօսիս, ես այդ կէտը չկրցի մտածել:

**ԱՆԹՈՒԱՆ.** — Աւրեմ գործի:

**Թ0ՄԱՍ.** — (Երկու պնակ անուշեղին բերելով) Հրամ-  
մեցք և կարծեմ թէ կեանքերնուղ մէջ առա-  
ջին անդամն է որ այս տեսակ անուշեղն պիտի  
ձաւակէք:

**ԱՆԹՈՒԱՆ.** — Շատ լու, շատ լու: (Ժամացոյցը աչքին  
զարկած ըլլալ ձեւացնելով): Այդ ի՞նչ է, տես  
Ժողէֆ, աս ժամացոյցը տես: Շիտակը ըսելով  
ես, որ այսքան ժամացոյց տեսած էի ատոր  
չտփ հնութիւն ունեցող ժամացոյց մը զեռ  
առաջին անդամն է որ կը տեսնամ:

**Թ0ՄԱՍ.** — Այս', հնութիւն մըն է և կրնամ ըսել թէ  
150 տարի առաջ ալ ասոր հնութիւն մը ըլլալը  
հաստատող գրութիւն մը կայ ժամացոյցին  
ետեւի պահարանին մէջ պահուած:

**ԱՆԹՈՒԱՆ.** — Բայցու հարկ չկայ, արգէն ինքնին ցոյց  
կուտայ այդ: (Ընկերողը) Հիմա ինձի մտիկ  
ըրէ, եկու քեզի հետ գրաւ մը բոնենք, եթէ  
աս ժամացոյցին սլաքին հետ քառորդ ժամ  
թիք թաք ընես, այսօրուան, ոչ թէ հոս կե-  
րածնիս, այլ ամբողջ ծախքը ես կ'ընեմ, իսկ  
եթէ կէս ժամ համբերելու ըլլաս հազար ֆր.  
կուտամ:

**ԹՕՄԱՍ.** — (Մեկուսի) Այս մարդը խենդ ըլլալու է որ այս տեսակ չնշին բանի մը համար 1000 ֆրանք կը տրամադրէ կոր, եթէ ինծի տալու ըլլայ այդ 1000 ֆրանքը, ոչ թէ կէս ժամ, այլ ժամ մը իսկ կը համբերեմ:

**ԺՕԶԵՖ.** — Շատ լաւ, ես քեզի 1000 ֆրանք կուտամ եթէ գուն ընես այդ թիք թաքը:

**ԹՕՄԱՍ.** — (Մեջ մտնելով) Ազնիւ պարոններ, ինչ պէտք կայ այդպէս իրարու նետ վիճաբանելու, եթէ այդ տեսակ գրաւ մը բռնելու փափաք ունիք ահա ես պատրաստ եմ ձեր երկուքին նետ պիտի բռնելու, ոչ թէ կէս ժամ այլ ժամ մը:

**ԱՆԹՈՒԱՆ.** — Ինչու չէ, քեզի նետ կը բռնուինք: Հիմա ինծի մտիկ ըրէ, ինչպէս քիչ մը համեցած ես, աւելի լաւ բացատրեմ: Պէտք է մէկ ժամ առանց ուրիշ տեղ ուշադրութիւնդ գարձնելու ժամացոյցին սլաքին նետ գլուխդ պիտի օրորես թիք թաք բռելով, եթէ ժամ մը համբերութեամբ կատարես այդ, դրաւը շահած կ'ըլլաս և կ'առնես 1000 ֆրանքը, իսկ եթէ այդ մէկ ժամուան մէջ ո և է շարժումով շուարիս և կենաս, գրաւը կորսնցուցած կ'ըլլաս և 1000 ֆրանք դրան կուտաս: Կ'ընդունի՞ս:

**ԹՕՄԱՍ.** — (Առանց մտածելու) Այս՝ կ'ընդունի՞ս: (Մեջ գրպանեն 15 նաբօլիօն հանելով) Աչա՛, ձեզի 15 նաբօլէ՛ն, որ չորսուկէս տարուան մէջ ունեցուցած եմ և կը յուսաւ: թէ մէկ ժամ յետոյ 30 նաբօլէ՞ն պիտի ըլլայ պահեստի դրամն: (Մեկուսի) Ո՛չ, ի՞նչ միծ շահ մէկ ժամուան մէջ:

**ԱՆԹՈՒԱՆ.** — Լաւ ժամածէ ճաշաբանապես: (Խել գրպանեն 15 նաբօլիօն հանելով) Ահա ես ալ դրամնեն առաջանակ տակ կը դնեմ 15 նաբօլէ՞ն: (Սեղանին վրայ կը դնէ, նոյնպէս թուման իր ձեռքը գտնուած 15 նաբօլիօնը սեղանին վրայ կը դնէ): Հիմա դանք պայմաններուն կատարելութեան:

**ԺՕԶԵՖ.** — (Մեջ մտնելով) Բայց համբերեցէք կարելի է ես մէկուկէս ժամ կ'ընդունի՞ս:

**ԹՕՄԱՍ.** — Ո՛չ, պարոն, գուք միջամտելու իրաւունք չունիք, որովհետեւ մենք արդէն գործը վերջացուցինք:

**ԱՆԹՈՒԱՆ.** — Սպասեցէք, իմ առաջարկած պայմաններս ով որ ընդունի, անոր հետ կը բռնենք գրաւը, այսինքն եթէ քեզ նետ բռնուիմ գրաւի պէտք է գիտասս թէ այդ մէկ ժամուան մէջ ինչ որ ալ ընենք չպիտի շուարիս գրաւը չկորսնցնելու համար:

**ԹՕՄԱՍ.** — Եղայր, ես ամէն կերպով կ'ընդունիմ, ինչպէս որ կ'ուզէք:

**ԱՆԹՈՒԱՆ.** — Լա՛, (Ժամը 8 կը զարնէ) Ահա ժամը 8 կը զարնէ, ուրեմն մինչեւ ժամը 9ը մեր գրաւի ժամն է, ուրեմն սկսէ:

**ԹՕՄԱՍ.** — (Ուրախութեամբ) Շահեցայ, 15 նաբօլէ՞նը ժամը 9ին պիտի առնեմ: (Ժամացոյցին առաջք երթալով կը սկսի սլաքին հետ միատեղ թիք թա՞ք, թիք թա՞ք, թիք թա՞ք ընել շարունակ: Անքուան եւ ժօղեան ձեռքի ժամումներով իրարու հետ բանի մը խօսի կը փոխանակեն):

**ԱՆԹՈՒԱՆ.** — Ալ մենք երթանք, մեր գործը լինցաւ:

**ԹՕՄԱՍ.** — (Քիչ մը ոււրառումով) Թի թի թիք թա թաք թի թի թիք թաք:

**ԱՆԹՈՒԱՆ.** — (Սեղանին վրայի դրամները ծողուելով, որոնց ձայնը պէտք է ելլալ) Օ՞ն ուրեմն երթանք:

**ԹՕՄԱՍ.** — (Դրամներուն ձայնը առնելով) Թի թիք թա թիք թիք թիք թիք (Անքուան եւ ժօղեան խնդալով կ'երթան):

ՎԱՐԱԳՈՅՐ

## ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Բեմը կը ներկայացնէ Առաջին արարուածք, ոչ  
մեկ տարբերութիւն :

ՏԵՍԻԼ Ա.

ԹՇ Ա Մ Ա (Առանձին

(Ժամացոյցին առջեւը կեցած) ԹՇ' ք Թա՛ք,  
ԹՇ' ք թա՛ք, (Նարունակ առանց կենալու,  
միայն անհամբերութեան շարժումներ կ'բնէ) :

ՏԵՍԻԼ Բ.

ԹՕՄՍՈՒ ԵՒ ԹԵՐԵԶԱ

ԹԵՐԵԶԱ. — (Մենելով) Մարդ որչափ ապուշ ըլլայու է  
որ իր ամուսնոյն հետ ունեցած վէճը ուրիշին  
պատճէ, բայց եթէ արցչափ ալ վախ յամա,  
բոլորովից կ'առնէ կը քալէ : (Մեղանը տեսնե-  
լով) Օ՛ հօ՛, այս ի՞նչ աղոտառթիւն : Բայց  
ի՞նչո՞ւ այս վիճակին մէջ ձգելով դուրս երե-  
է : (Ներս երքալու համար դեպի ձախ դառնա-  
լով եւ Թօմասը տեսնելով ժամացոյցին առջեւ,  
ու թիֆ բաքը կը շարունակի խնդալով) Այս  
էր պակաս, ժամացոյցին հնութիւն մըն է  
ըսելով, (ըսելով) ինք ալ անոր կարգը անցնիւ  
կ'ուզէ կոր : Թօմաս, Թօմաս, այդ ի՞նչ խայ-  
տառակութիւն է... Թօմաս ի՞նչո՞ւ չես պա-  
տառիսներ կոր : (Թօմաս կը շարունակէ թիֆ

քաբը) : Բայց Տէր Առառուած, չըլլայ թէ իսկը-  
քի՞ն եկած ըլլայ, երթամ բժիշկ կանչեմ, թօ-  
մաս, թօմաս : Ո՛չ, ո՛չ, խենդեցեր է, առանց  
բան մը չեմ կրնար ընել : (Կ'երպալ) :

ԹՕՄՍՈՒ. — (Առանձին) ԹՇ' ք թա՛ք, ԹՇ' ք թա՛ք,  
(Այսպէս երկու վայրկեան) :

ՏԵՍԻԼ Գ.

ԹՕՄՍՈՒ, ԹԵՐԵԶԱ ԵՒ ԱԼՊԵՐ

ԹԵՐԵԶԱ. — Խնդրեմ պարոն բժիշկ, հաճեցէք, ներս  
եկեք և տեսէք թէ ինչ է եղեր Թօմասը :

ԱԼՊԵՐ. — (Առանց տեսնելու Թօմասը) Փո՛րը կը ցաւի  
թէ գլուխը :

ԹԵՐԵԶԱ. — Կ'արծեմ ուղեղը, Պ. Տօքթօր :

ԱԼՊԵՐ. — Ուսքերը տաք ջուրը գնելու է, ամրող  
տաքութիւնը վար կ'իջնէ և կ'աղատի :

ԹԵՐԵԶԱ. — Ո՛չ Տօքթօր, Թօմասին ցաւը տաք ջու-  
րով անցնելիք ցաւ չէ, տեսէք :

ԱԼՊԵՐ. — (Թօմասը տեսնելով եւ սոսկալով) Օ՛, օ՛,  
այս շատ առասոց բան է, Մ. Թօմաս ի՞նչ  
հաճոյք կը զգաս այդպէս թիք թաք ընելով :

ԹՕՄՍՈՒ. — Թիք թաք, թիք թաք, թիք թաք :

ԱԼՊԵՐ. — Հասկցայ, հասկցայ, ուղեղային տկարու-  
թիւն ունի, որը ես անկարոզ եմ դարձանելու :

Մեր զրացի Տօքթօրը, որ խենդերու բժիշկ է,  
անիկա կանչեցէք :

ԹԵՐԵԶԱ. — Խնդրեմ, Պարոն բժիշկ, դուք հոս քիչ  
մը սպասեցէք, ես հիմա ան ալ կը կանչեմ :

ԱԼՊԵՐ. — Օ՛, ոչ աիկին, չեմ կրնար սպասել, ժամը  
ջուկէսին ուրիշ տեղ ժամագրութիւն ունիմ և  
որովհետեւ հիմա ժամը 9ին տասը կ'ուզէ, ուշ  
կը մնամ, ներողութիւն :

ԹԵՐԵԶՈՒ. — Բայց վստահ եղէք թէ երկու վայր՝  
կեսնէն կուգամի:

**ԱԼՊԵԹ** . — Շատ լւու , շուտ զացէք : (Թէրեզա կը մեկնին :  
Դէպի Թօմասը յառաջանալավ եւ ժամացոյցին  
նայելով) . Ծիտակը ըսկելով , կեանքիս մէջ  
առաջին անգամն է որ այս տեսակ խենդ մը  
կը տկանամ :

$$\theta \circ U \cup U' = \theta \cdot h' \cdot p \quad \theta^{w'} \cdot p, \quad \theta \cdot h' \cdot p \quad \theta^{w'} \cdot p;$$

### *Skull 7.*

ԱՐՅԵԼ, ԹԻԾԻՉՎՈՒ ԽԵ ՕՄՔԱՐ

ՕՄՔԱՐ. — Եթէ կարեւոր հիւանդ մը ունիք կրնամ  
նալի:

Թէթէջու, — Այս, զ, բժիշկ, կարեւոր է, աեւ,  
ուստինիս նայեցէք, խելքին է դպիք:

**ՕՄՔԱՐ.** — (Թօմասը տեսնէլով ժամացոյցին առջեւը,  
որ շարունակ թիֆ քաֆ կ'ընէ, ինքն ալ անոր  
հետ կը սկսի թիֆ քաֆ ընել) : Հա՛, հասկցայ,  
չնչին բան մըն է, պէտք է պազ ջուրով լո-  
գանք ընկել տալ : Աճապարէ, գնա մեր տունը:  
բոէ ժաքի և Միշէլի որ գան իրենց հետ բե-  
րելով խենդերը կապելու հոմար մասնաւոր  
հասու պարանք :

Թէ՛րէջԱ. — Եսան յաւ հիմա կ'երթամ: (Կ'երքալ:)

ՕՍՔԱՐ • — Այս տեսակ հիւանդութիւննեցէ չէք համ-  
կընար Պարոն բժիշկ :

ԱԼՊԵՌ · — ԱՇ, չեմ հասկնար և հասկնալ ալ չեմ ու-  
ղեր, որովհետեւ ատկէ անախորժ բաներ ալ  
կը պատահին :

S U P L E M.

ՆՈՅՆՔ, ԹԵՐԵԶԱ, ՃԱՌ ԵՒ ՄԻՇՔ

ԹԵՐԵԶԱ. — Ահաւասիկ եկան

ՕՄՔԱՐ. — Ժաք, Միշել, պատրաստուեցէք, սա ժամացոյցին առաջքը կեցող մարդը կապելով ուղղակի հիւանդանոց տարէք և պատ ջուրի մէջ լոգանք բնել տուէք:

ԺԱՅ ԵՒ ՄԻՇԵԼ. — (Միաբերան) ՀՐԱՄԱՆՆԵՐԴ ԳՐԵ-  
ԽՈՎԱ ՎՐԱՅ:

ԱԼՊԵՐ. — Ինձի հրաման տուէք, Տիկին, ժամը 9n է:

ԹՇՈՄԱՅ. — (Յոզենած) ԹՇիք թա՛ք : (Դառնալով սեղա-  
նին) Վերջապէս : Ահա ժամը 9 կը զարնէ, 15  
նաբօլէօնը շահնցայ տուէք : Բայց ուր են այն  
պարոնները որոնն են ետ գրաւ որնու եղուաւ :

**ԹԵՐԵԶԱ -** ի՞նչ պարո՞ն, ի՞նչ սրաւ :

ԹՕՄԱՆ. — Բայց ժամ մը առաջ երկու պարսններ  
եկան, ինծի հետ զրաւ բռնեցին այս ժամա-  
ցոցին սլաքին հետ ժամ մը թիվ թաք ընելու-  
համար, որուն փոխարէն 1500 ֆրանք տուած  
էի անոննա:

ՕՄՔԱՐ. — Մ. Թօմաս, ուրախ եղիր որ այդ գրաւը  
մէկ ժամուան համար բռներ էք, ևթէ մէկու-  
կէս ժամուան համար ըլլար, հիմա ինքը ինք-  
նիդ հիւանդանոցին մէջ, խենդերու բաժնին  
տեղը պիտի գտնայիք, և պէտք է զիտնաք  
թէ ձեզ պէս շատեր կան հո՞ :

ԱԼՊԵՌ. — Ենորհիւ քեզի պէս խելացի լոճիշկներուն :



## ՎԱՐԱԳՈՅ

998

999

# ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ

---

	Դ.ր.
Ակնցի Հաճի Սղան	3. Յ. Ամիրենց 40
Արշին Մալ Ալան	15
» » » Հայտառ Թուրքերէն	25
Ասիացի Սափրիչը	Յ. Պապեսեան 10
Ամերիկահայ Փեսացուն կամ Տայը Կարապես	25
Բարեկենդանի Անկուտիները	15
Դդումի Վաճառականը	15
Երանոս Աղբար	Տ. Փափազեան 25
Երկու Խուլեր	Մօլիկ 15
Թիֆ Թամ	10
Կրլ Մխուր կամ Մասս Մէջն է	Ե. Թօլաեան 50
Մարիամ Մաղրաղենացի	50
Մատանս	10
Սիբլոբ	10
Գողը	Տ. Միրքո 15
Հնարամիս Վարձակալը	10

Յ. Աբրահամեան Գրատունը կը հայթայթէ Դպրոցական, Վիալական, Թատերական, Պատմական, Բանաստեղծական ամէն տեսակ Հայերէն գիրքիր ևայլն, ևայլն:

Հասցէ

## ՅԱԿՈԲ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Կ. Պոլիս, Պատր Ալի, Բէշիս Էֆ. Խան

2013

